CHILDREN
OF ARMENIA
FUND

**«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՔՈԱՖ)**
***Հաճախ տրվող հարցեր***

*Որո՞նք են ՔՈԱՖ-ի շահառու համայնքները:*

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամն աշխատում է բացառապես գյուղական համայնքներում: Մինչ օրս Հայաստանի 6 մարզերի՝ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Գեղարքունիք Շիրակ, Տավուշ, 64 համայնքներ հանդիսացել են ՔՈԱՖ-ի շահառու:
ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն հաճախող երիտասարդները Լոռու մարզի 25 գյուղական և 2 քաղաքային համայնքից են՝ Վանաձոր և Ալավերդի:

*Կարո՞ղ եմ մասնակցել ՔՈԱՖ դպրոցի ծրագրերին:*

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը կրթական արտադպրոցական ծրագրեր է իրագործում Արմավիրի մարզի *Լեռնագոգ, Դալարիկ, Քարակերտ, Մյասնիկյան, Հացիկ, Շենիկ, Գետաշեն, Վանանդ* և Արագածոտնի մարզի *Արտենի, Արագածավան* գյուղերի մեր շահառու դպրոցներում:

Դրանց մասնակցությունը բաց է: Ամեն երկու տարին մեկ հայտարարվում են խմբերի համալրումների մասին, նախապես տրվում են չափորոշիչները՝ տարիք, հետաքրքրություններ, մասնակցության պայմաններ:
ՔՈԱՖ-ի բոլոր ծրագրերն անվճար են:

*Կարո՞ղ եմ ՔՈԱՖ-ում կամավոր լինել:*

Եթե ցանկանում եք կամավորական աշխատանքով ձեր մասնագիտությամբ կամ հմտություններով օգտակար լինել Հայաստանի գյուղական համայնքների զարգացմանը, ապա կարող եք լրացնել հայտաձևը՝ կցելով ձեր ինքնակենսագրությունը (CV-ն) և ուղեկցող նամակը՝ հիմնավորելով ձեր հետաքրքրությունն ու մասնակցության հեռանկարները:

*Ես՝ որպես ՔՈԱՖ-ի շրջանավարտ, ի՞նչ ծրագրերի կարող եմ մասնակցել:*

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը խրախուսում է իր շրջանավարտներին դիմելու բարձրագույն ուսումնական հաստատություններ, կրթություն ստանալու և կարիերա կառուցելու: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

CHILDREN OF ARMENIA FUND

(HSBC Հայաստան) հետ համատեղ տարիներ շարունակ ՔՈԱՖ-ն իրականացնում է բուհերում սովորող մարզաբնակ ուսանողներին ուղղված «Կրթաթոշակների ծրագիր»: Ի լրումն ֆինանսական աջակցության՝ մշակվել է կարիերայի զարգացման փաթեթ, որը ներառում է պրակտիկա, մենթորություն և աշխատանքային հմտությունների զարգացման դասընթացներ: Ծրագրի նպատակն է աշխատաշուկայում մրցունակ, գիտակ և մասնագիտական հմտություններ ունեցող կադրերի պատրաստումը:

*ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ծրագրերից որևէ մեկին կարո՞ղ եմ գրանցվել:*

Ներկայումս Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն են հաճախում ՍՄԱՐԹ ավանին հարող 25 գյուղական և 2 քաղաքային համայնքի՝  Վանաձորի և Ալավերդու երիտասարդները: ՍՄԱՐԹ քաղաքացիության կրթակարգի շրջանակներում ծրագրային ամեն շրջափուլից առաջ համալրման մասին հայտարարվում է ՔՈԱՖ-ի կայքում և սոցիալական մեդիայի էջերում:

Ուշադիր կարդալով ընդունելության չափորոշիչները՝ տարիք, համայնք, համապատասխանող յուրաքանչյուրը կարող է լրացնել հայտաձևն ու ընդգրկվել ՔՈԱՖ ՍՄԱՐԹ քաղաքացիության կրթակարգում:

*Ի՞նչ արժե ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն հաճախելը:*

ՔՈԱՖ-ի բոլոր ծրագրերը՝ կրթական, առողջապահական, տնտեսական, երեխայի և ընտանիքի ծառայություններ, ՍՄԱՐԹ քաղաքացիության կրթակարգ, անվճար են:

*Ամառային ծրագրեր ունե՞ք:*

Ամռան ամիսներին մեր կանոնավոր կրթական ծրագրերը (ՔՈԱՖ դպրոց և ՍՄԱՐԹ) դադարում են, փոխարենը կազմակերպում ենք ամառային ճամբարներ թե՛ շահառու, թե՛ ոչ շահառու համայնքների պատանիների ու երիտասարդների համար:

*Կարո՞ղ եմ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ում դասընթաց վարել:*

«ՍՄԱՐԹ քաղաքացի» կրթակարգի շրջանակներում ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ի ուսանողները հնարավորություն ունեն իրենց ծրագրերից դուրս՝ ունկնդրելու իրենց ոլորտին առնչվող հետաքրքիր բանախոսների:
«ՍՄԱՐԹամեջ» կոչվող հանդիպումների շարքը հարթակ է իրենց բնագավառում լուրջ հաջողությունների հասած և երիտասարդներին մոտիվացիա հաղորդող մասնագետների համար՝ ներկայացնելու իրենց մասնագիտական ճանապարհն ու խոսելու հաջողության բանաձևից:

coaf.org
coaf@coaf.org
+374  10 502076

*Կարո՞ղ եմ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն այցելել:*

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կարելի է այցելել ինչպես անհատներին, այնպես էլ խմբերին: Պետք է նախապես զանգահարել +374 60 70 50 70 հեռախոսահամարով և պայմանավորվել այցի օրվա, ժամի, այցելուների քանակի մասին:

*ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանն ընդլայնվելո՞ւ է:*

Այս պահին ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանում գործում են ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը, այցելուների կենտրոնը, «Կոնցեպտ» հյուրանոցը և ազնվամորու մշակման ուսումնափորձարարական այգին:

Ընթացքի մեջ են Համաժողովների կենտրոնի շինարարությունը և սպորտային համալիրի նախագծումը:

*Իսկ մեր մարզում կլինի՞ ՍՄԱՐԹ կենտրոն:*

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ նախաձեռնության տեսլականն ու նպատակն է գյուղական զարգացման մոդել դառնալը: Մեր ջանքերն ուղղված են նրան, որ Լոռիում մեկնարկած ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի ձևաչափը կրկնօրինակվի Հայաստանի բոլոր մարզերում՝ զարգացման, նոր գիտելիքների ու հնարավորությունների հորիզոններ բացելով Հայաստանի գյուղական բոլոր համայնքների բնակիչների համար:

*Ինչպե՞ս կարող է անհատը կամ կազմակերպությունը համագործակցել ՔՈԱՖ-ի և/կամ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի հետ:*

Մենք ուրախությամբ համագործակցության ձեռք ենք մեկնում անհատներին ու կազմակերպություններին, որոնք ուզում են «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի ծրագրերի ու հետաքրքրությունների շրջանակում զարգացման նախաձեռնությամբ հանդես գալ: Անհրաժեշտ է միայն լրացնել համագործակցության դիմում-ձևաթուղթը՝ կապ հաստատելու համար:

*Ինչպե՞ս սենյակ ամրագրել ՔՈԱՖ-ի «Կոնցեպտ» հյուրանոցում:*

ՔՈԱՖ-ի «Կոնցեպտ» հյուրանոցի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերին նամակ գրելով՝ կարելի է արագ ու հեշտ կապ հաստատել հյուրանոցի անձնակազմի հետ՝ տեղեկատվության, սենյակների հասանելիության և ամրագրման  համար:

coaf.org
coaf@coaf.org
+374  10 502076

CHILDREN OF ARMENIA FUND

Ուղիղ կապ հաստատելու համար հյուրանոցի աշխատակազմի հետ կարելի է զանգահարել +374 60 700050 հեռախոսահամարով:

*Կարո՞ղ է ՔՈԱՖ-ն ինձ և ընտանիքիս ֆինանսապես աջակցել:*

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը ֆինանսական կամ նյութական որևէ աջակցություն չի ցուցաբերում ընտանիքներին ու անհատներին: Մեր նպատակն է բարելավել գյուղացու կյանքի որակն ու հզորացնել գոյություն ունեցող հաստատությունները: Համայնքահենք զարգացման ծրագրերի շնորհիվ մենք նոր գիտելիք ու հմտություններ ենք փոխանցում գյուղերի բնակիչներին՝ իրականություն դարձնելու իրենց հետաքրքրությունները ու նոր հնարավորություններ ստեղծելու:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076